ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 56(1), 2022 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 551.58; 911.3:314

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ *, Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ **

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Հոդվածում տրվել է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի ժողովրդագրական իրավիճակը հետպատերազմական ժամանակահատվածում: Պետության կողմից ժողովրդագրական քաղաքականության գիտական հիմունքներով մշակման ու կիրառման համար մեծ կարևորություն ունի բարենպաստ ժողովրդագրական իրավիճակի ձևավորումը, որը հարմար է իրականացնել ըստ շրջանների: Դա հնարավորություն կտա ապահովելու սերունդների բնականոն հերթափոխը, միաժամանակ կնպաստի աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Ժողովրդագրական իրավիճակի վերլուծության արդյունքների միավորումը կարևոր է ինչպես պետության, այնպես էլ վերջինիս առանձին տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական միտումների բացահայտման և կանխատեսման տեսանկյունից: Աշխատանքում վեր են հանվել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի ժողովրդագրական հիմնախնդիրների ձևավորման և զարգացման գործոններն ու օրինաչափությունները, արդի վիճակը, պատճառահետևանքային կապերը, հիմնավորվել են բարելավման ուղիները: Ներկա պայմաններում շրջանի ժողովրդագրությունը ձևավորող գործոններից են սահմանամերձ գոտիների խաղաղ բնակչության փախստական դառնալը կամ տեղահանվելը, ֆիզիկապես գոյատևելու նկատմամբ անվստահությունը և այլն: Մարտունու շրջանում մտահոգիչ է սոցիալական և տնտեսական բազմաթիվ հիմնախնդիրների խորացումը, որոնց լուծման հիմնական ուղին այստեղ տնտեսության զարգացումն է, արտոնությունների ավելացումը, աշխատատեղերի ստեղծումը և այլն: Ավելի մտահոգիչ է ժողովրդագրական առումով ռիսկային գոտում գտնվող բնակավայրերի հարատևման հարցը, որոնց բնակչության բնական աճը հիմնականում մի քանի բազմազավակ ընտանիքների հույսին է: Նրանց տարբեր տարիքային խմբերի երեխաներն են ապահովում բնակավայրերի աշխատանքային ռեսուրսների համար աշխատատեղ հանդիսացող դպրոցի ու ակումբի, համայնքապետարանի ու բուժկետի գործունեությունը: Իսկ շրջանի Կավահան, Մսմնա, Պառավաթումբ, Վարանդա բնակավայրերում, որտեղ գործում են մասնաճյուղ-դպրոցներ, շատ ընտանիքներ ստիպված տեղափոխվում են քաղաքային բնակավայրեր՝ երեխաների հիմնական և միջնակարգ կրթության հնարավորության բացակայության պատճառով:

Բացի նշվածներից, ժողովրդագրությունը զգայուն համակարգ է, որն իր վրա կրում է տարաբնակեցման համակարգի թերությունները ևս: Այդ առումով փոքր բնակավայրերի ընդգրկվածությունը շրջանի տարաբնակեցման համակարգին թույլ է: Փոքր գյուղական բնակավայրերի բնակչության

* E-mail: artur.abrahamyan.1122@mail.ru ** E-mail: a.potosyan@ysu.am

ծնելիության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները անհրաժեշտ է դարձնել տեղական քաղաքականության գլխավոր ուղղությունը:

Աշխատանքում քննարկվել են նաև Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի ներկայիս բնակավայրերի ժողովրդագրական իրավիճակի շարժընթացի արդի վիճակին վերաբերող հարցեր:

https://doi.org/10.46991/PYSU:C/2022.56.1.065

***Keywords*:** demographic situation, natural growth, census, natural movement, migration, sexual and age composition, permanent population, resettlement.

Ներածություն: Արցախի Հանրապետության (ԱՀ) ռազմաքաղաքական զարգացման արդի փուլում սրվել է ժողովրդագրական գործընթացների զգայնությունն ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ առանձին շրջաններում՝ պայմանավորված ոչ կայուն իրավիճակով: Վերջինս իր հետքն է թողել բնակչության բնական աճի օրինաչափությունների և ապագա միտումների դրսևորման, մասնավորապես՝ բնակչության տեղաբաշխման և միգրացիայի հոսքերի ինտենսիվության վրա: Պատերազմն անորոշություն է մտցրել ժողովրդագրական իրավիճակի փոփոխունակության մեջ: Նշված խնդիրներն ունեն և՛ ընդհանուր, և՛ յուրահատուկ գծերը: Ակնհայտ է, որ դրանցով է պայմանավորված տարաբնակեցման գործընթացների, բնակչության սեռատարիքային կազմի, կենսագործունեության բնույթի, բնական և մեխանիկական շարժերի ճոճանակային փոփոխական բնույթը: Նման իրավիճակն անհրաժեշտ է վերահսկել ժամանակի և տարածության մեջ՝ ապահովելով ժողովրդագրական գործընթացների աստիճանական կարգավորումը: Դա հնարավորություն կտա կանոնակարգել բնակչության վերարտադրության դրական շարժընթացը, կնպաստի աշխատանքային ռեսուրսների ձևավորմանը, պահպանմանը և դրանց արդյունավետ օգտագործմանը [1]:

Ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը կարևոր է նաև ինչպես պետության, այնպես էլ վերջինիս առանձին տարածքային միավորների սոցիալ-տնտեսական զարգացման միտումների բացահայտման և կանխատեսման տեսանկյունից: Տեսական և կիրառական ուղղվածության հետազոտությունները հնարավորություն են ընձեռում գնահատել և առավել նպատակային դարձնել ժողովրդագրական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացը:

Յուրաքանչյուր պահի ծննդի, մահվան, ընտանիքի մեծության, գաղթի ընթացքի վրա մեծապես ազդում են պատերազմական գործողությունները՝ նպաստելով սեռատարիքային կազմի անհավասարակշռությանը: Իսկ դա հետազայում գոյանում է պատմական զարգացման ընթացքում հասարակության սոցիալ-տնտեսական պայմաններում տեղի ունեցող փոփոխություններին և տեղաշարժերին համընթաց: Այսօրվա պատերազմն ազդում է ժողովրդագրության վրա ոչ միայն այս պահին, այլ նրա հետևանքները մի քանի փուլեր են անցնում՝ խախտելով բնականոն ընթացքը, ստեղծելով անհամապատասխանություն բոլոր օղակներում:

Ելնելով վերը շարադրվածից՝ սույն հոդվածում խնդիր է դրվել վերլուծել ԱՀ Մարտունու շրջանի ժողովրդագրական հիմնախնդիրների ձևավորման և զարգացման գործոններն ու օրինաչափությունները, առկա հիմնախնդիրները, պատճառահետևանքային կապերը, մատնանշել լուծման ուղիները: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել ԱՀ կառավարության և

Մարտունու շրջանի վարչակազմի կողմից՝ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական արդյունավետ քաղաքականություն իրականացնելու, բնակավայրերի տարածքային կառավարման և զարգացման տարբեր ծրագրեր մշակելու և իրականացնելու համար:

Հետազոտության սկզբնաղբյուրները և մեթոդները: Հետազոտության համար հիմք են հանդիսացել ԱՀ ԱՎԾ պաշտոնական հրապարակումները, ինչպես նաև հեղինակների դաշտային հետազոտության արդյունքները: Աշխատանքում կիրառվել են վիճակագրական վերլուծության, համեմատական-աշխարհագրական մեթոդները և տարածաժամանակային ու հիմնախնդիրային մոտեցումները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: 1993–2002 թթ. Մարտունու շրջանի ծնելիության մակարդակի վրա մեծ հետք են թողել բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերը: Շրջանի բնակչության բնական շարժի ուսումնասիրությունից պարզ է դառնում [2], որ 1990–1994 թթ. պատերազմական գործողությունները խախտել են ինչպես սեռային, այնպես էլ տարիքային կառուցվածքը՝ ստեղծելով ժողովրդագրական ճեղքվածք: Վերջինիս հետևանքները արդեն զգալի են վիճակագրական տվյալներում, որովհետև այժմ վերոհիշյալ թվականների ծնվածների հերթն է վերարտադրվելու: Իսկ եթե նրանց քանակը քիչ է, ապա ուղիղ համեմատություն է նկատվում հավանական ծնունդների հետ:

Ներկա պայմաններում շրջանի ժողովրդագրությունը ձևավորող գործոններից են սահմանամերձ գոտիների խաղաղ բնակչության փախստական դառնալը կամ տեղահանվելը, ֆիզիկական կյանքի հարատևման նկատմամբ անվստահությունը և այլն: 2014 թ. օգոստոսյան սահմանային լարվածություններից և 2016 թ. ապրիլյան քառօրյայից հետո շրջանի բնակչության միգրացիոն հավելաճի գործակիցը շարունակաբար բացասական արժեք է ունեցել (նկ. 1): Դրա հետևանքով կանխատեսելի է նաև 2020 թ. պատերազմական գործողությունների արդյունքում 2021 թ. ավելի սրված և շարունակական կանխատեսվող միգրացիոն հավելաճի բացասական գործակիցը:



Նկ. 1: ԱՀ և Մարտունու շրջանի միգրացիոն հավելաճի գործակիցների համեմատական կորերը [3–6]:

Մարտունու շրջանի գյուղական բնակչության թիվը վերջին տարիներին կտրուկ նվազել է Սոս, Բերդաշեն, Հերհեր գյուղական համայնքերում, ինչը բացատրվում է զանգվածային արտագաղթով:

Ժողովրդագրական իրավիճակը բնութագրող կարևորագույն գործոններից են նաև ամուսնությունը, ամուսնալուծությունը, պտղաբերության տարիքի բնակչության բաժինը ընդհանուր բնակչության մեջ, բնակչության կենսամակարդակը և այլն [1, 7]: Հասարակության գոյությունը և զարգացումը անհնարին են առանց մարդկային սերնդի վերարտադրության, ուստի դա է որոշիչ գործոնը, որն էլ հենված է ծնելիության և մահացության ցուցանիշների վրա: Բնական աճը Մարտունու շրջանում գրեթե միշտ ունեցել է դրական ցուցանիշ, սակայն հասկանալի պատճառներով այն 2020 թ. գրանցել է բացասական արդյունք:

Շրջանում 2009 թ.-ին ծնելիության մակարդակի կտրուկ աճ է գրանցվել, ինչը արցախյան մեծ հարսանիքի ժողովրդագրական արդյունքն է: Այդ տարում բնական հավելաճի ցուցանիշը կազմել է յուրաքանչյուր 1000 մարդու հաշվով 9,5 մարդ (նկ. 2): Դրանից հետո (2010–2014 թթ.) որոշակիորեն նվազել է բնական աճի ցուցանիշը, և 2015 թ.-ին այն որոշակիորեն աճել է՝ դարձյալ կապված 2009 թ. ամուսնացածների վերարտադրության, բայց արդեն երկրորդ և երրորդ սերունդների հետ: Վերոհիշյալ գծապատկերից կարելի է եզրակացնել, որ Մարտունու շրջանում ստեղծված էին դրական նախադրյալներ բնակչության բնական աճի համար, սակայն վերջին դեպքերով պայմանավորված՝ որոնք ռիսկային գործոններ են, այն բազմակողմանի ուսումնասիրման և վերլուծության կարիք ունի:



Նկ. 2: Բնական աճի ցուցանիշների համեմատական կորերը (2010–2020 թթ.) [8, 9]:

Շրջանում վերաբնակեցման ծրագրերը, նախքան 2020 թթ. պատերազմական գործողությունները իրականացվում էին Վազգենաշեն և Ջիվանի համայնքերում: Սակայն ռազմական գործողությունների հետևանքով նշված երկու և Շեխեր, Սարգսաշեն, Զարդանաշեն, Ներքին Ճարտար բնակավայրերը և Թաղավարդ գյուղի կեսն անցան հակառակորդի վերահսկողության տակ:

Ժողովրդագրական կարևոր ցուցանիշ են նաև ամուսնությունների թիվը, ամուսնության միջին տարիքը, ամուսնալուծությունների քանակը: Շրջանի տարածքում ամուսնալուծությունների աճ է նկատվում, որը բացասական երևույթ է (աղյ. 1): Դրան հակառակ՝ ամուսնությունների քանակի աճի միտում է դրսևորվում՝ սեռատարիքային կազմի համապատասխանության ժողովրդագրական գործընթացով պայմանավորված: Վերլուծելով շրջանի բնակչության սեռատարիքային կազմի առանձնահատկությունները, ինչպես նաև կանանց և

տղամարդկանց ամուսնությունների տարիքային ընթացքը [10]՝ կարելի է եզրակացնել նման տեմպերի պահպանման դեպքում առաջիկա տարիներին սպասվող հավանական շարժընթացը:

Աղյուսակ 1

Ամուսնությունները և ամուսնալուծությունները ԱՀ-ում (2006–2020 թթ.) [2–6, 9]

Տարեթիվը	Արցախի Հանրապետություն		Մարտունու շրջան	
	ամուսնություն	ամուսնալուծություն	ամուսնություն	ամուսնալուծություն
2006	827	123	130	13
2007	519	123	89	12
2008	3057	137	395	30
2009	947	106	148	12
2010	1200	131	149	18
2011	939	169	124	24
2012	872	147	111	17
2013	962	185	155	22
2014	1412	212	213	17
2015	1186	180	196	18
2016	934	168	136	16
2017	961	227	134	24
2018	899	204	133	27
2019	836	207	106	20
2020	317	116	22	16

Ընդհանուր առմամբ երրորդ և հերթական երեխայի ծննդի ցուցանիշները մեծ են հատկապես շրջանի գյուղերում, ինչն էլ մեծ մասամբ պայմանավորված է գյուղական բնակավայրերում բամազավակ ընտանիք ունենալու հոգեբանական ավանդույթով: Ուսումնասիրելով և համադրելով շրջանի տարածքում վերջին 7 տարվա որոշ տվյալներ [8–10] պարզ է դարնում, որ մոր միջին տարիքը ծննդյան պահին և առաջին երեխայի ծննդյան ժամանակ բարձրացել է 1,2 տարով: Դա ազդում է ծնելիության մակարդակի վրա՝ պայմանավորելով կանանց պտղաբերության տարիքի բարձրացում, միաժամանակ հանգեցնելով սերնդատվության ընդհանուր քանակի նվազման:

Մարտունու շրջանում աստիճանական տեղաշարժեր են նկատվում մոր որոշակի տարիքում ծնվածների ընդհանուր թվաքանակի մեջ: Եթե դիտարկենք 2010–2015 թթ. շարժընթացը, ապա նկատելի է, որ 15–19 և 20–24 տարիքային խմբերում ծնվածների քանակը գնալով նվազում է: Դրան հակառակ՝ բարձրանում է 25–29 տարիքային խմբում ծնվածների քանակը (աղյ. 2):

Ժողովրդագրության բնագավառում առանձնահատուկ տեղ ունի բնակչության սեռատարիքային կառուցվածքի, տարածքային ներքին տարբերությունների և հիմնախնդիրների բացահայտումը (նկ. 3): Դրանք թույլ են տալիս կանխատեսել շրջանի բնակչության հեռանկարային թիվը, պլանավորել սպառման առարկաների արտադրությունը, սպասարկման օբյեկտների քանակը, տեղաբաշխումը և այլն: Մարտունու շրջանի բնակչության տարիքային կառուցվածքը նկատելի փոփոխություններ է կրել: 18–59 տարիքային խմբերում բնակչության թվի ավելացում է նկատվում, իսկ 60 և բարձր տարիքային

խմբերում նույն ցուցանիշը գնալով նվազում է: Դա թույլ է տալիս կանխատեսելու, շրջանի բնակչության կյանքի միջին տևողության կրճատում սպասվող նմանատիպ շարժընթացի պայմաններում:

Աղյուսակ 2

Մարտունու շրջանում ծնվածների բաշխումն ըստ մոր տարիքի [8–10]

Տարեթիվը	Ընդամենը ծնվածներ	Այդ թվում ըստ մոր տարիքի						
		մինչև 20	20–24	25–29	30–34	35–39	40–44	45–49
2010	387	18	136	133	75	20	5	0
2011	350	17	115	137	61	15	5	0
2012	337	9	136	121	54	13	4	0
2013	337	14	117	129	49	23	5	0
2014	309	15	117	109	52	14	–	2
2015	361	10	106	153	65	22	5	0
2016	341	7	84	145	64	34	8	0
2017	307	15	94	113	61	22	2	0
2018	328	11	94	103	90	23	7	0
2019	265	9	89	86	46	31	4	0
2020	194	8	66	58	41	17	3	1

Շրջանի մշտական բնակչության թվաքանակում 2015 թ. մարդահամարի արդյունքներով մինչաշխատունակ տարիքի բնակչության ընդհանուր տեսակարար կշիռը կազմել է 26,3%: Դրանցից գյուղական բնակչության քանակը 2,3 տոկոսային կետով բարձր է քաղաքայինի նույն ցուցանիշից [11]: Շրջանի մինչաշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից, իսկ հետաշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշիռը բարձր է հանրապետության միջին ցուցանիշից: Դա վկայում է, որ շրջանի բնակչության մեջ կանխատեսելի է ծերացման միտումը: 80-ից բարձր տարիքի գյուղական բնակչության բաժինը Մարտունու շրջանում՝ 4,2% է, իսկ օրինակ՝ Մարտակերտի շրջանում՝ 5%:



Նկ. 3: Մարտունու շրջանի մշտական բնակչության սեռատարիքային բաշխվածությունը (2021 թ. տարեսկզբի դրությամբ) [9]:

Ինչ վերաբերում է քաղաքային բնակչության սեռատարիքային կազմի փոփոխություններին, ապա բնակչության մեջ 45-ից բարձր տարիքի կանանց թվաքանակը յուրաքանչյուր տարիքային խմբում գերազանցում է տղամարդկանց նույն տարիքային խմբերին, իսկ 39-ից ցածր տարիքային խմբերում արական սեռը գերազանցում է իգականին [12]: Հաշվի առնելով նշվածները՝ շրջանի ինքնակառավարման մարմինները սոցիալ-տնտեսական տարաբնույթ ծրագրեր կազմելու և իրականացնելու համար պետք է առավելագույն չափով հաշվի առնեն շրջանի և նրա առանձին բնակավայրերի բնակչության սեռատարիքային կառուցվածքի արդի վիճակը և միջոցներ ձեռնարկեն ցանկալի արդյունք ապահովելու համար:

Ժողովրդագրական իրավիճակը զգայուն է նաև սոցիալական և հոգեբանական գործոնների նկատմամբ: Սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությամբ ստեղծվում են բնակչության վերարտադրության որոշակի սոցիալական նորմեր ամուսնության, ընտանիքում ծննդի կարգավորման նկատմամբ: Այս գործոններից են առանձնապես բազմազավակության ավանդույթները:

Ժամանակակից երիտասարդը (աղջիկ թե տղա) ժամանակատար և ռիսկային է համարում գյուղատնտեսական աշխատանքը, ավելի ձգտում է գրասենյակային աշխատանքի, որտեղ սեփական ներդումը չի արտահայտվում, բայց ամսական աշխատավարձ է առկա պետական միջոցներից: Այդ վերաբերմունքը բացատրվում է ոչ միայն ըստ աշխատանքի վարձատրության, շահույթի ստացման, այլև այն հանգամանքով, որ հենց ֆիզիկական աշխատանք կատարողների մոտ բացակայում է անաշխատ եկամուտը [13]: Իսկ արդի կյանքի պայմանները թելադրում են ամուսնության տարիքի, երեխաների նախնական քանակի հաշվարկ: Անշուշտ, դա ո՛չ մեկ օրվա հարց է, ո՛չ էլ մեկ տարվա, այլ ավելի երկար ժամանակների: Դա էլ բարձրացնում է շրջանում, ինչու չէ՝ նաև հանրապետությունում երիտասարդների շրջանում մտահոգիչ համարվող ամուսնության խնդիրը:

Մարտունու շրջանի տարաբնակեցման համակարգում բնակչության շուրջ 45%-ը բնակվում է Ճարտար և Մարտունի քաղաքային բնակավայրերում:

Բնակչության թվաքանակի շարժընթացի վրա էական ազդեցություն ունի մշակութային, առողջապահական, առևտրական, կրթական հասանելիությունը [1, 7]: Մարտունու շրջանի տարածքում ժողովրդագրական տեսակետից ռիսկային գոտում գտնվող բնակավայրերի բնակչության բնական աճը պայմանավորված է առավելապես մի քանի բազմազավակ ընտանիքներով: Այդպիսի ընտանիքների տարբեր տարիքային խմբերի երեխաներն ապահովում են այդ բնակավայրերի և ընտանիքների համար կենսական նշանակություն ունեցող դպրոցի, ակումբի, համայնքապետարանի և բուժկետի գոյությունը: Իսկ Կավահան, Մսմնա, Պառավաթումբ, Վարանդա բնակավայրերում կան գործող մասնաճյուղ-դպրոցներ, սակայն շատ ընտանիքներ տեղափոխվել և տեղափոխվում են քաղաքային բնակավայրեր՝ երեխաների համար հիմնական և միջնակարգ կրթության հնարավորություն ստեղծելու համար: Հասկանալի է, որ այդպիսի գյուղերը կունենան ծերացման միտում: Ի դեպ նկատելի է, որ նշված բնակավայրերի ընդգրկվածությունը շրջանի տարաբնակեցման համակարգին թույլ է: Բնակիչներն արդեն հարմարվել են նման կարգավիճակին և հաճախ զարմանքով են նկատում, որ շրջանի վարչակազմը կամ պետությունը հիշել է իրենց գյուղը:

Մարտունու շրջանի Ժողովրդագրական իրավիճակը պայմանավորում են նաև սոցիալական և տնտեսական բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց լուծման հիմնական ուղին տնտեսության զարգացումն է, արտոնությունների ավելացումը, աշխատատեղերի ստեղծումը և այլն: 2021 թ. ԱՀ Կառավարության կողմից նախատեսվող արտոնությունների մեծ մասը տարբերակված է եղել՝ ըստ սեռատարիքային կազմի, որտեղ պատշաճ ուշադրության կենտրոնում չեն գտնվում 18–62 տարեկան տղամարդիկ, մինչդեռ նույն տարիքի իգական սեռը ստանում է նյութական մեծ օժանդակություն: Նման հանգամանքներում այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ իգական սեռին նյութական շահագրգռվածությամբ հայրենիքում պահելով՝ նրանց տղաներն ու ամուսիններն էլ ստիպված կմնան: Դա մեր գնահատմամբ անթույլատրելի է, և առաջիկայում դրանից բխող խնդիրներ կառաջանան: Թեկուզ դա նպաստում է այօրվա սոցիալական լարվածության թուլացմանը, սակայն վաղը բարեկեցիկ և ապահով ապագայի նկատմամբ պատկերացումներն առաջին իսկ հնարավորության դեպքում կդառնան նպաստավոր գործոն բնակչության արտագաղթի համար: Նշված խնդրից խուսափելու համար, անհրաժեշտ է այդ նյութական աջակցությունների տրամադրումը կազմակերպել որևէ անհատական տնտեսություն հիմնելու, զարգացնելու նպատակով, որպես խրախուսանք: Հարկավ, անհատական աշխատանքը բարձրացնում է սերը սեփական ձեռքբերումների նկատմամբ, սոսնձում հայրենի հողում ապրելուն: Դրա շնորհիվ ժողովրդագրական իրավիճակը շրջանում մի փոքր կարող է կարգավորվել, որը, բացի զուտ աշխարհագրականից, կունենա նաև ռազմավարական կարևոր նշանակություն:

Եզրակացություն:

- Արցախի Հանրապետության Մարտունու Շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր ուղղություններն առայժմ չեն նպաստում ժողովրդագրական առումով ռիսկային գյուղական բնակավայրերի բնակչության ծնելիության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը,
- շրջանի ինքնակառավարման մարմինները սոցիալ-տնտեսական տարաբնույթ ծրագրերի կազմման և իրականացման համար պետք է հաշվի առնեն բնակչության սեռատարիքային կառուցվածքի արդի վիճակը և միջոցներ ձեռնարկեն ցանկալի արդյունք ապահովելու համար,
- շրջանի տարածքում առկա տնտեսության տարերային զարգացումը և բնակչության անհամաչափ բաշխվածությունը իրենց անմիջական և միջնորդավորված ազդեցությունն են թողնում ժողովրդագրական գործընթացների վրա,
- վերաբնակեցման որոշ ծրագրերի անհրաժեշտություն կա Մարտունու շրջանի Մսմնա, Կավահան, Խերխան, Ծովատեղ, Ավդուռ, Հացի, Քաջավան, Կաքավաձոր բնակավայրերում,
- շրջանում մոր միջին տարիքը ծննդյան պահին առաջին երեխան ունենալու ժամանակ բարձրացել է 1.2 տարով, որի հետևանքով նույնքանով բարձրացել է նաև պտղաբերության տարիքը: Այդ պատճառով նվազել է սերնդատվության ցուցանիշը:

Առաջարկություններ.

✓ կառավարող մարմինները պետք է ուշադրության կենտրոնում պահեն ժողովրդագրական իրվիճակի բարելավմանն ուղղված ծրագրերն ու իրականացման ժամանակացույցերը: Միջոցներ ձեռնարկեն (ՀՀ-ի հովանու ներքո) երկրի ապագայի նկատմամբ վստահության ստեղծման, կայունության պահպանմանն ուղղված միջոցառումներում, քանզի առանց դրա մյուս հարցերն անիմաստ են դառնում,

✓ շրջանի վարչակազմը պետք է մշակի շրջանի բնակավայրերի կայուն զարգացման ծրագրեր, որտեղ մասնավորապես անհրաժեշտ է ներառել փոքր գյուղական բնակավայրերը, քանի որ դրանք զգայուն են սոցիալ-տնտեսական գործոնների նկատմամբ,

✓ շրջանում ստեղծել տնտեսական ու կենցաղմշակութային հավասար պայմաններ: Դրանք կնպաստեն ժողովրդագրական համեմատաբար կայուն ցուցանիշների ձևավորմանը,

✓ շրջանում ժողովրդագրական քաղաքականության գլխավոր ուղղություն համարել վերարտադրության առումով ռիսկային գյուղական բնակավայրերի բնակչության ծնելիության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Ստացվել է՝ 12.12.2021
Գրախոսվել է՝ 14.04.2022
Հաստատվել է՝ 14.04.2022

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պոտոսյան Ա., Գրիգորյան Ա. Լեռնային Ղարաբաղի գյուղական բնակավայրերի սոցիալ-ժողավրդագրական հիմնախնդիրները: *ԱրՊՀ Գիտական տեղեկագիր* **1** (2016), 63–68:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 1995–1999 թթ.: Ստեփանակերտ (2002), 32–38:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2000–2005 թթ.: Ստեփանակերտ (2006), 29–31:
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2006–2012 թթ.: Ստեփանակերտ (2013), 39–45:
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008–2014 թթ.: Ստեփանակերտ (2015), 45–52:
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2015–2019 թթ.: Ստեփանակերտ (2020), 42–49:
7. Աբրահամյան Ա.Գ. Արցախի Հանրապետության գյուղական բնակչության բնական շարժի արդի միտումները և դրսևորման առանձնահատկությունները: *ԱրՊՀ Գիտական Տեղեկագիր* **2** (2019), 105 էջ:
8. *ԼՂՀ ԱՎԾ ժողովրդագրական ժողովածու*: Ստեփանակերտ (2017), 23–28:
9. *Արցախի ժողովրդագրական ժողովածու*: Ստեփանակերտ (2021), 18–38:
10. http://mss.nkr.am/?page_id=14467
11. Աբրահամյան Ա.Գ. ԱՀ Մարտունու շրջանի բնակավայրերի և բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունները: *ԱրՊՀ Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու)*: *Ստեփանակերտ* (2018), 261–265:
12. *ԼՂՀ մարդահամարի ցուցանիշներր*: Ստեփանակերտ (2016), 54–56:
13. Խոջաբեկյան Վ.Ե. *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը (19-20-րդ դարերում և 21-րդ դարի շեմին)*: Երևան (2002), 256–259:

А. Г. АБРАМЯН, А. А. ПОДОСЯН

ГЕОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ДЕМОГРАФИЧЕСКОЙ СИТУАЦИИ МАРТУНИНСКОГО РАЙОНА РЕСПУБЛИКИ АРЦАХ

Резюме

В статье представлена демографическая ситуация Мартунинского района Республики Арцах в послевоенный период. Формирование благоприятной демографической ситуации, удобной для регионов, имеет большое значение для разработки и реализации государством демографической политики на научной основе. Это обеспечит нормальную ротацию поколений, способствует эффективному использованию трудовых ресурсов. Результаты демографического анализа могут быть объединены для выявления и прогнозирования основных тенденций социально-экономического развития как государства, так и его отдельных территориальных единиц.

В данной статье мы стремимся выяснить факторы и закономерности развития демографических проблем Мартунинского района Республики Арцах, текущую ситуацию, причинно-следственные связи, обосновать пути их улучшения. К факторам, формирующим демографию региона в настоящее время, относятся беженцы или перемещение гражданского населения в приграничные районы, из-за опасности физического уничтожения и т.д. Обострение многих социальных и экономических проблем в Мартунинском районе вызывает озабоченность, для преодоления которой необходимо развитие экономики, повышение льгот, создание рабочих мест и т.д. Более остро стоит вопрос закрепления поселений в так называемой зоне демографического риска, естественный прирост населения в которой происходит в основном за счет нескольких многодетных семей. Наличие детей разных возрастных групп поддерживает содержание школы и клуба, общественного центра, помогает организации рабочих мест в таких поселках, муниципалитете и медицинском центре. Многим семьям приходится переезжать в основном в городскую местность из-за отсутствия доступа детей к начальному и среднему образованию, например в районных селах Кавахан, Мсмна, Параватумб, Варанда.

Кроме того, демографические данные – это чувствительная система, имеющая недостатки системы переселения. В этом плане включение малых поселений в систему расселения региона является слабым местом. Осуществление мер по увеличению рождаемости в небольших сельских поселениях должно стать главным направлением местной политики.

В статье обсуждаются и другие вопросы, связанные с динамикой текущего демографического состояния в нынешних населенных пунктах Мартунинского района Республики Арцах.

A. G. ABRAHAMYAN, A. H. POTOSYAN

GEOGRAPHICAL PECULIARITIES OF THE DEMOGRAPHIC SITUATION OF THE MARTUNI REGION OF THE REPUBLIC OF ARTSAKH

Summary

The article presents the demographic situation of Martuni Region of the Republic of Artsakh in the post-war period. The formation of a favorable demographic situation, convenient for implementation by the regions, is of great importance for the development and implementation of state demographic policy on a scientific basis. This will ensure the normal rotation of generations, contributing to the efficient use of labor resources. The results of demographic analysis can be combined to identify and predict the main trends in the socio-economic development of both the state and its particular territorial units. In this article, we strive to find out the factors and patterns of development of demographic problems in Martuni Region of the Republic of Artsakh, the current situation, cause-and-effect relationships, to substantiate the ways to improve them. In the current situation, one of the factors determining the demography of the region is the number of refugees in the border areas, possible life risks, etc. The aggravation of many social and economic problems in the Martuni Region raises concerns, which must be resolved through economic development, increase in benefits, creation of jobs, etc. More acute is the issue of fixing settlements in the so-called demographic risk zone, the natural population growth of which is mainly due to several large families.

The presence of children of different age groups supports the maintenance of the school, the club and the community center, helps to organize jobs in villages, such is in local municipalities and in medical centers. Many families have to move mainly to urban areas due to the lack of access for children to primary and secondary education, for example, in the district villages of Kavakhan, Msmna, Paravatumb, Varanda. In addition, demographic data is a sensitive system with the disadvantages of the resettlement system. In this regard, the inclusion of small settlements in the settlement system of the region is weak. The implementation of measures to increase the birth rate in a small rural settlement should become the main direction of local policy.

The article discusses other issues related to the current state of the demographic movement in the current settlements of Martuni Region of the Republic of Artsakh.